



**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
2016-2018ԹԹ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը ստեղծվել է 2013թ-ին: Ինստիտուտի առաքելությունն է նպաստել փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակմանը՝ իրականացնելով հետազոտություններ երիտասարդության շրջանում:

Ինստիտուտի հիմնական գործառույթն է ուսումնասիրությունների իրականացման միջոցով երիտասարդության շրջանում առաջնային լուծում պահանջող հիմնախնդիրների բացահայտումը, ծրագրային առաջարկների մշակումը և դրանց ներկայացումը որոշում կայացնողներին:

Ինստիտուտը ծավալում է գործունեություն հետևյալ ուղղություններով՝

- **Նպաստել փաստարկված երիտասարդական պետական քաղաքականության մշակմանը՝ պարբերաբար իրականացնելով երիտասարդական ուսումնասիրություններ և խթանելով երիտասարդության մասնակցությանը երիտասարդական պետական քաղաքականության մշակման գործընթացներին:**

Այս ուղղությամբ 2016-2017թթ. իրականացվել են հետևյալ գործողությունները՝

1 . «Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները» հետազոտության հրապարակում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել աշխատաշուկայի պահանջարկը, երիտասարդ կադրերին բնորոշ հատկանիշները, գործատու-երիտասարդ հարաբերությունների կայացման գործընթացում ուսումնական հաստատության և երիտասարդի ստացած կրթության դերը, առաջարկել գործատու-երիտասարդ հարաբերությունների կայացմանն ուղղված ինստիտուցիոնալիզացված մեխանիզմներ: Հետազոտության ընթացքում կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները՝

- փաստաթղթերի վերլուծություն,
- «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» հետազոտության ընթացքում ստացված տվյալների երկրորդային վերլուծություն,
- երիտասարդության, կրթության ոլորտի 10 փորձագետների հետ հարցազրույցներ,
- 24 գործատուների հետ խորքային հարցազրույցներ,
- 12 խմբային քննարկում երիտասարդների հետ ուսումնական հաստատություն-գործատու կապի մասին երիտասարդների ընկալումները և ակնկալիքները պարզելու նպատակով:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ տնտեսության ներկայիս պայմաններում գործատուները սկսել են կիրառել աշխատողների, մասնավորապես երիտասարդ մասնագետների ներգրավման զգուշավոր ռազմավարություն՝

գործատուները նախընտրում են գործ ունենալ առավել փորձառու և միջին տարիքի մասնագետների հետ, կադրային հոսունությունը կանխելու և լրացուցիչ կրթություն տրամադրելու անհրաժեշտությունից խուսափելու համար: Աշխատաշուկան վերածվել է «գործատուին պատկանող շուկայի», որտեղ գործատուն հնարավորություն ունի ընտրելու լավագույն մասնագետներին:

ՀՀ-ում մասնագիտական կրթության համակարգի և աշխատաշուկայի շահերի վեկտորները տարբեր ուղղություններ ունեն: Մասնագիտական կրթության համակարգը հիմնականում ուղղորդված է սեփական ծառայությունների առաջնային (ներքին) սպառողը՝ ուսանողներին և ոչ թե երկրորդային՝ (արտաքին սպառողը) գործատուն: Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի համագործակցության արդյունավետ մոդելներ կարող են լինել ճյուղային պատվերները ըստ ոլորտների/ կոնկրետ գործատուի, պրակտիկայի, դիպլոմայինների և կուրսայինների կազմակերպումը իրական գործատուի կողմից, կամ մասնակցությամբ, ինտեգրացված կրթական-արտադրական ծրագրերի մշակումը:

Վերլուծության բովանդակությունը ամփոփված է հետևյալ հիմնական բաժիններում՝

- Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի միջև կապը և առկա հիմնախնդիրները,
- Տնտեսության առանցքային ոլորտների աշխատուժի պահանջարկի գնահատում,
- Երիտասարդների զբաղվածությունը ըստ տնտեսական գործունեության տեսակների,
- Երիտասարդների զբաղվածությունը և գործազրկությունը ըստ տնտեսական գործունեության, ըստ կրթական մակարդակի,
- Գործատուների ակնկալիքները երիտասարդ կադրերից,
- Աշխատաշուկա-կրթական համակարգ համագործակցության նախընտրելի մոդելներ,
- Հաշմանդամություն ունեցող երիտասարդների հիմնախնդիրները աշխատաշուկայում:

Հետազոտության նախնական տարբերակը քննարկվել է փորձագետների կողմից, որի հիման վրա մշակվել է հաշվետվության վերջնական տարբերակը:

2 . «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի մասին» հետազոտության հրապարակում:

Հայաստանում երիտասարդական աշխատողի ինստիտուտի կայացման նպատակով այս հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ինստիտուտի կայացման նախադրյալները հայաստանյան իրականության մեջ: Հետազոտության ընթացքում կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները՝

- փաստաթղթերի վերլուծություն,
- որակական հարցազրույցներ 20 առանցքային տեղեկատուների հետ, որոնք միևնույն ժամանակ հանդիսանում էին երիտասարդական կազմակերպությունների ղեկավարներ, կամ կազմակերպության ներկայացուցիչներ,
- հարցազրույցներ 10 փորձագետների հետ, որոնք երիտասարդական ոլորտում ակտիվորեն գործող մասնագետներ են և մասնակցում են երիտասարդական քաղաքականության մշակման տարբեր փուլերում,
- 23 խմբային քննարկում երիտասարդների հետ:

Հետազոտությունն իրականացվել է Երևանում և Արագածոտնի, Արարատի, Շիրակի, Սյունիքի մարզերում:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ երիտասարդության ոլորտում ձևավորված չէ միասնական մոտեցում երիտասարդական աշխատանքի շրջանակի վերաբերյալ, սակայն բոլոր շահագրգիռ կողմերը ընդգծում են երիտասարդական աշխատանքի ուղղվածությունը նպաստելու երիտասարդների անձնային և մասնագիտական աճին: Վերլուծությունը քննարկվել է փորձագետների հետ, տեղի են ունեցել վալիդացիոն հանդիպումներ երիտասարդների հետ:

3 . «ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2013-2017թթ-ների ռազմավարության մոնիթորինգ և գնահատում»

Հետազոտության նպատակն է գնահատել ռազմավարության կառուցվածքը, մշակել առաջարկությունների փաթեթ նոր ռազմավարության համար, ինչպես նաև ռազմավարության շրջանակում իրականացված ծրագրերի մոնիթորինգ և գնահատում կատարել, որի միջոցով կմշակվի ռազմավարության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանություն:

Ռազմավարության գնահատման ընթացքում իրականացվել է շուրջ 20 խմբային քննարկում Երևանի և ՀՀ մարզերի երիտասարդների հետ, ինչպես նաև 40 հարցազրույց երիտասարդական ոլորտի փորձագետների և ներկայացուցիչների հետ, ուսումնասիրվել են ոլորտային և ծրագրային փաստաթղթեր:

«ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2013-2017թթ-ների ռազմավարության գնահատումը» առավել մասնակցային դարձնելու նպատակով հետազոտական աշխատանքների ընթացքում Ինստիտուտի թիմին միացել են 5 փորձագետներ, 12 մարզային համակարգողներ:

Հետազոտության իրականացման ընթացքում Շիրակի, Լոռիի, Տավուշի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում համակարգողները իրականացրեցին կարիքների գնահատում քննարկումների և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների միջոցով: Վեր հանված կարիքները հիմք կհանդիսանան 2018-2022 թվականների ռազմավարության մշակման համար:

Երևանում իրականացվել են խմբային քննարկումներ երիտասարդների տարբեր խմբերի հետ՝ ուսանողներ, հաշմանդամություն ունեցող անձինք, փախստականներ:

4 . «Անցյալի, ներկայի և ապագայի պատկերը երիտասարդության գիտակցության մեջ» միջազգային հետազոտություն

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոնի և Բելառուսի պետական համալսարանի սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի համագործակցության շրջանակներում կազմակերպել և իրականացրել է այս հետազոտության դաշտային աշխատանքերը՝ կազմակերպելով ԵՊՀ-ում և Հայաստանի պետական

ճարտարագիտական համալսարաններում ուսանողների լայն շրջանակների մասնակցությունը օնլայն հարցմանը:

Հետազոտությունը զուգահեռաբար անցկացվել է ԱՊՀ մի շարք երկրներում և հետազոտության նպատակն էր ուսումնասիրել անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ պատկերացումները և արժեքային համակարգի տրանսֆորմացիան տարբեր սերունդների շրջանակներում:

5. «Ներառումը Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանում»
հետազոտություն

2015թ. նոյեմբեր ամսից մեկնարկել էր «Ներառումը Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանում» ծրագիրը, որի նպատակն էր մշակել երիտասարդական աշխատողների համար աջակցության միջոցառումներ և ոչ ֆորմալ դասընթացներ Erasmus+, Youth in Action ծրագրերի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է Ավստրիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի ազգային գործակալությունների, Սալտո Արևելյան Եվրոպայի և Կովկասի (SALTO EECA), ինչպես նաև ՍՄԼՏՈ ներառման ռեսուրս կենտրոնների կողմից: Ծրագրի հեռահար նպատակն էր աջակցել երիտասարդական աշխատողների կրթությանը և սահմանափակ կարողություններ ունեցող երիտասարդների ներառմանը Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանում: Ծրագրի տևողությունը 2015-2016թթ էին, որի ընթացքում մասնակից երկրներում իրականացվել են հարցազրույցներ ներառման ոլորտում գործող երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների և աշխատողների շրջանում, մշակվել է վերլուծական հաշվետվություն յուրաքանչյուր երկրում իրավիճակի վերաբերյալ: Վերլուծության հիման վրա մշակվել է երիտասարդների ներառման ռազմավարություն:

ԵՈՒԻ-ը մշակել է կարիքների գնահատման մեթոդաբանությունը և երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների և աշխատողների հետ հարցազրույցի հարցաշարերի նախնական և վերջնական տարբերակները, ինչպես նաև իրականացրել է հարցազրույցները և արդյունքների վերլուծությունը:

6. «Աշխարհի և ՀՀ երիտասարդների համեմատական բնութագիրը» վաստաթուղթ:

Փաստաթուղթը մշակված է ըստ տարբեր կատեգորիաների: Այն օգտակար նյութ է ինչպես կիրառական, այնպես էլ հետազոտական նպատակով՝ երիտասարդական ոլորտի փորձագետների, երիտասարդական ծրագրեր մշակող և իրականացնող կառույցների, երիտասարդական աշխատողների, հասարակական կազմակերպությունների, ոլորտի մասնագետների, ուսանողների համար: Փաստաթուղթը մշտապես թարմացվում է Ինստիտուտի կողմից:

7 . «Մասնագիտական դասընթացներին երիտասարդների մասնակցությունը որպես աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու գործիք» զեկույց:

2017թ-ի դեկտեմբերի 5-6-ը Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ «Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում» թեմայով գիտագործնական համաժողով, որը կազմակերպել էր Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի Հայաստանի մասնաճյուղը, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետը և Ցկյանս ուսումնառության հայաստանյան լիգան:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին մշակութային և քաղաքացիական կրթության, մասնագիտական վերապատրաստման և աշխատաշուկայի հայաստանյան խնդիրները, ինչպես նաև մեծահասակների կրթության մեջ հեռուսուսուցման արդի տեխնոլոգիաների, ՏՀՏ (Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ) ներդրման և կիրառման առանձնահատկությունները:

Համաժողովը ամփոփվեց «Կլոր սեղան» քննարկումով, որի ժամանակ համաժողովի մասնակիցները մշակեցին ոլորտի վերաբերյալ ընդհանուր առաջարկների փաթեթ համապատասխան գերատեսչություններին ներկայացնելու համար:

Համաժողովի շրջանակներում Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն Մարինա Գալստյանը ներկայացրեց զեկույց «Մասնագիտական դասընթացներին երիտասարդների մասնակցությունը որպես աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու գործիք» վերնագրով: Ձեկույցը հիմնված էր Ինստիտուտի կողմից իրականացված մի շարք հետազոտական տվյալների վրա՝ երիտասարդների զբաղվածության, տնտեսական, ֆինանսական և մտավոր անկախության, կրթության և աշխատաշուկա կապի վերաբերյալ:

8 . «Ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները» հետազոտություն

Հետազոտության նպատակն է բացահայտել ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները:

Հետազոտության շրջանակներում 2018թ.-ին իրականացվել են հարցումներ 600 երիտասարդի շրջանում, ովքեր ներգրավված են ստեղծարար զբաղվածության ոլորտում, 11 փորձագիտական հարցազրույցներ հետևյալ ստեղծարար ոլորտների փորձագետների հետ՝

- Գովազդ և շուկայագիտական,
- Ճարտարապետություն,
- Արհեստներ,
- Նախագծման աշխատանքները,
- Ֆիլմեր, հեռուստացույց, վիդեո, ռադիո, լուսանկարչություն,
- ՏՏ, ծրագրային ապահովման եւ համակարգչային ծառայություններ,
- Հրատարակչական գործունեություն,
- Թանգարաններ, պատկերասրահներ և գրադարաններ,
- Երաժշտություն, կատարողական արվեստ և կերպարվեստ:

Իրականացվել է ստեղծարար ոլորտների տնտեսական ցուցանիշների վերլուծություն: Հետազոտության արդյունքների վալիդացիայի, ինչպես նաև ստեղծարարության գաղափարը տարածելու և ստեղծարարության ռեսուրսները տեսանելի դարձնելու համար տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ հետազոտության շրջանակներում իրականացվել են հանրային քննարկումներ և վալիդացիոն հանդիպումներ Լոռվա, Շիրակի մարզերում և Երևանում:

9. Փաստաթղթեր՝ քաղաքականության համառոտագրեր, ուղեցույցեր:

ԵՈՒԻ-ն հետազոտությունների շրջանակներում մշակել է համառոտագրեր, որոնք ուղղված են մատնանշելու հետազոտության արդյունքում երիտասարդների, փորձագետների կողմից մատնանշված, ինչպես նաև տարբեր ոլորտային հետազոտություններում նշված կարիքները՝ ինչպես երիտասարդության, այնպես էլ երիտասարդական ոլորտի:

Մշակվել են համառոտագրեր հետևյալ հարցերի շուրջ՝

- ✓ [Ինչպե՞ս մշակել երիտասարդներին հարմարեցված քաղաքականություն և քաղաքականության համառոտագիրը](#)
- ✓ [Երիտասարդներին հարմարեցված հանրային քաղաքականությունների մշակում](#)
- ✓ [Երիտասարդների առաջնային կարիքները](#)
- ✓ [Ինչպե՞ս զարգացնել երիտասարդական աշխատանքի ինստիտուտը Հայաստանում. քաղաքականության համառոտագիր](#)
- ✓ [Աշխատաշուկայի ուսումնասիրության մեթոդաբանություն. քաղաքականության համառոտագիր](#)
- ✓ [«Երիտասարդական քաղաքականության որակի չափանիշներ» . ուղեցույց](#)
- ✓ [Վերլուծություններ երիտասարդների զբաղվածության վերաբերյալ](#)
- ✓ [Ինչպե՞ս \(2\) ընտրել մասնագիտություն](#)
- ✓ [Երիտասարդների զբաղվածությանն ուղղված պետական ռազմավարությունը որպես միջգերատեսչական համագործակցության օրինակ:](#)

➤ ԵՈՒԻ գործունեության հաջորդ ուղղությունն է Ինստիտուտը դարձնել ակտիվ հետազոտական և ակադեմիական կենտրոն:

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը 2015թ. ավարտին հայտարարեց մարզային համակարգողների հավաքագրման մրցույթ, որի նպատակն էր ստեղծել երիտասարդական հետազոտողների ցանց: Ցանցում ներգրավվելով, համակարգողները համալրել են Ինստիտուտի թիմը՝ աջակցելով մարզերում հետազոտական աշխատանքներին: Արդյունքում ընտրվել են 12 մարզային համակարգողներ: Հաշվի առնելով Գեղարքունիքի, Սյունիքի մարզի մասշտաբները, դիմած թեկնածուների թիվը և փորձը՝ այս մարզերից ընտրվել են երկուական համակարգողներ:

2016թ.-ից Ինստիտուտը մարզային համակարգողներին ներգրավվել է հետազոտական ծրագրերում, որոնց մեկնարկից առաջ համակարգողներն անցել են

վերապատրաստման դասընթացներ երիտասարդական ուսումնասիրությունների, երիտասարդական քաղաքականության և այլ մասնագիտական ոլորտների վերաբերյալ: Համակարգողները վերապատրաստում անցան նաև Հայաստանում կազմակերպված ԱՊՀ երիտասարդական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողների և հետազոտական խմբերի գիտագործնական գիտաժողովի շրջանակներում:

ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության մոնիթորինգի և գնահատման պրոցեսում երիտասարդների ներգրավվածությունը և պրոցեսի թափանցիկությունը ապահովելու համար ԵՌԻԻ հետազոտական թիմը մարզային համակարգողներից բացի, համագործակցել է անկախ փորձագետների հետ: Նրանք աջակցել են հետազոտական աշխատանքների իրականացմանը, ՀՀ ՍԵՀՆ երիտասարդական ծրագրերի գնահատման և մոնիթորինգի իրականացման:



Ինստիտուտը 2017թ-ից սկսած մասնակցում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից երիտասարդական աշխատողների և փորձագետների համար իրականացվող երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրին՝



մասնակիցներին ներկայացնելով ինստիտուտի գործունեությունը և երիտասարդական ծրագրերում հետազոտությունների դերը: Վերապատրաստման մոդուլը մշակվել է նաև Ինստիտուտի կողմից 2016 թվականին իրականացված «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտության» հիման վրա: Ծրագրին մասնակցում են երիտասարդների, երիտասարդության հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանք տանող պետական և հասարակական կառույցների ներկայացուցիչներ:

Վերապատրաստումը հազեցած է այնպիսի թեմաներով, որոնք վերաբերում են երիտասարդական քաղաքականությանը, երտասարդների կարիքներին և դրանց գնահատմանը, թիմային աշխատանքների իրականացմանը, ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանը և մի շարք այլ թեմաների:

Որպես հետազոտական կենտրոն, որն աշխատում է երիտասարդական ոլորտում՝ Ինստիտուտի թիմը պարբերաբար մասնակցում է **կարողությունների զարգացման դասընթացների:**

Այսպես 2016-2018թթ. թիմի անդամները մասնակցել են հետևյալ դասընթացներին և գիտաժողովներին՝

Հայաստանում

- ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից կազմակերպված «19-րդ ԱՎՄՀ բանաձևերի ներդրումը և համապատասխանեցումը ՀՀ-ում» մեթոդաբանական աշխատանքային քննարկում,
- Երիտասարդական քաղաքականության ռազմավարական պլանավորում թեմայով դասընթաց ԵՈՒԻ-ում,
- ԵԿԾ հայաստանյան համակարգողների տարեկան հանդիպում,
- ԱՊՀ երիտասարդական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողների և հետազոտական խմբերի գիտագործնական գիտաժողով,
- Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի Հայաստանի մասնաճյուղի կողմից կազմակերպված «Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում» թեմայով գիտագործնական համաժողով,
- Երիտասարդության ֆորում՝ նվիրված ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022թթ. ռազմավարության մշակմանը,
- Կրթական գործինքերի ազգային տոնավաճառ,
- «Երիտասարդական աշխատանք – երիտասարդական աշխատող» սեմինար,
- «Երիտասարդական ոլորտի լուսաբանում» կրթական մոդուլի մշակման նպատակով փորձագիտական հանդիպում,
- Սոցիալական հաշվետվողականության և մոնիթորինգի մեթոդաբանություն,
- ՀՀ ստարտափ գավաթի առաջնություն :

Արտերկրում

- Երիտասարդական քաղաքականության մշակման երկրորդ սեմինար, Թուրքիա
- Երիտասարդական աշխատանքի ճանաչման թեմայով աշխատանքային հանդիպում-սեմինար, Ուկրաինա
- Արևելյան գործընկերության երկրներում երիտասարդական քաղաքականության զարգացման թեմայով միջազգային դասընթաց, Լիտվա
- Youth mobility սեմինար, Վրաստան
- Երիտասարդական քաղաքականության արդյունավետության գնահատում սեմինար, Վրաստան
- Եվրոպական կամավորական ծրագրի 20-ամյակի առթիվ ԵԿԾ համակարգողների հանդիպում, Սլովենիա
- «Քաղաքականություն և հետազոտություն» ամառային դպրոցին, Սլովակիա,
- «Եվրոպական երիտասարդական քաղաքականություն. տեսություն և պրակտիկա», Գերմանիա,
- «Լեզուները կրթության որակի համատեքստում» աշխատաժողով, Ավստրիա,
- «Վարքաբանական գիտությունները և խաղայնացումը» աշխատաժողով, Սլովակիա,
- Երիտասարդների վերաբերյալ նոր օրակարգերը. երիտասարդական ուսումնասիրությունների միջազգային գիտաժողով, Մեծ Բրիտանիա, Շոտլանդիա,

- «Քաղաքացիական կրթության ոլորտում կազմակերպությունների ներուժի զարգացում, TOT, Ուկրաինա,
- "STEP Into Evaluation career" խորագրով վերապատրաստման դասընթաց գնահատողների համար, Սոլդովա,
- Եվրոպական երիտասարդության հետազոտողների ցանցի տարեկան հանդիպում, Հունգարիա,
- Երիտասարդական քաղաքականության արձագանքը երիտասարդության կարիքներին, Չեխիա:

Ինստիտուտի տնօրեն Մարինա Գալստյանը 2017թ մարտից [Եվրոպական երիտասարդության հետազոտողների ցանցի անդամ](#) է, իսկ Ինստիտուտի վերլուծաբան Լիլիթ Ավդալյանը 2018թ-ից սկսած ցանցի թղթակից է: Ցանցի շրջանակներում Youth Wiki օնլայն հանրագիտարանի համար մշակել է «Կամավորական աշխատանքները Հայաստանում» նյութը, այժմ որպես անդամ Մարինան ներգրավված է “Youth Research. The Essentials” ձեռնարկի մշակմանը ցանցի երկու այլ անդամների հետ:

Մարինա Գալստյանը 2018թ-ից ներգրավված է ՄԱԿ-ի կողմից պարբերաբար մշակվող Մարդկային զարգացման ազգային զեկույցի մշակմանը՝ որպես երիտասարդական քաղաքականության փորձագետ:

Ինստիտուտի դաշտային աշխատանքների համակարգող Հերմինե Կարապետյանը Կուրա լաբի կողմից կազմակերպված «Հայաստան Ստարտափ գավաթի առաջնությանը» առաջարկել է կրթության ոլորտում առկա խնդիրներին նորարար լուծումներ՝ հիմնված Ինստիտուտի կողմից իրականացված [«Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ- ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները»](#) հետազոտության արդյունքների վրա: Արդյունքում մշակվել է «Contact Students» առցանց հարթակը, որը համագործակցության եզրեր է առաջարկում գործատուներին և ուսանողներին:

- **Ինստիտուտը գործունեության հաջորդ ուղղությունն է ձևավորել երիտասարդության հարցերով զբաղվող անհատների, խմբերի, կազմակերպությունների հետ համագործակցության գործուն ցանց:**


Այս ուղղության շրջանակներում Ինստիտուտն իրականացրել է հետևյալ գործողությունները.

Գործընկերային հանդիպումների շարք ՀԿ-ների հետ, որոնց շրջանակներում հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմանի համագործակցության եզրերը, համատեղ հետազոտությունների, դասընթացների և այլ միջոցառումների իրականացման հնարավորությունները: Հանդիպումներ են եղել հետևյալ կազմակերպությունների հետ՝

- «Փյունիկ» Հայաստանի Հաշմանդամների Միություն հասարակական-քարեգործական կազմակերպություն,
- Ընդդեմ Իրավական Կամայականության ՀԿ,
- Սոցիալական Արդարություն ՀԿ,
- Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք ՀԿ,
- Պետական Գործիչների Երիտասարդական Դպրոց ՀԿ,
- Եվրոպական Երիտասարդական Պառլամենտ,
- Հայաստանի Ուսանողական Ազգային Ասոցիացիա,
- Երիտասարդություն ՀԿ,
- Երիտասարդությունը Ուժ է երիտասարդական ՀԿ:

Free Space: 2015թ. մարտ ամսից Ինստիտուտում բացվել է Free Space-ը: Free Space-ը տարածք է, որը կիրառվում է ոչ կոմերցիոն նպատակներով, հնարավորություն է տալիս երիտասարդներին իրենց աշխատանքային օրը կազմակերպել: Այն նաև հարթակ է երիտասարդական թրեյնինգներ, հանդիպումներ ու քննարկումներ անցկացնելու համար: 2016-2018թթ. ընթացքում Free Space-ի շրջանակներում համագործակցել ենք «Երիտասարդությունն ուժ է» ՀԿ-ի հետ, որն անցկացրեց իրազեկման 2 ծրագրեր /follow-up/. Դրանք մաս էին կազմում 'Քաջալերելով Կանանց. Գենդերային Հավասարության և Մարդու Իրավունքների համատեքստում՝ դասընթացի, որն իրականացվել էր Երևան քաղաքում մայիսի 20-27, ընդգրկելով 8 մարզ, 13 քաղաք/ և 30 մասնակից: 2 ծրագրերի արդյունքում Բաց տարածքում հավաքվել էին ընդհանուր թվով 35 երիտասարդներ՝ փորձի փոխանակում կատարելու և դասընթացավարի հմտությունները զարգացնելու համար, քանզի այն անցկացնում էին հիմնական դասընթացի մասնակիցները:

Տարածքում Ինստիտուտի աշխատակիցների կողմից կազմակերպվել է Civic սեղանի խաղը: Այն երիտասարդների տարբեր խմբերի համար ոչ միայն առօրյան հետաքրքիր դարձնելու միջոց է, այլև միմյանց ճանաչելու, շփվելու, ինչպես նաև ԵՈՒԻ թիմի հետ աշխատանքային օրը կիսելու լավ առիթ:



Խաղը հետաքրքիր է հետազոտական առումներով, քանի որ խաղի ընթացքում երիտասարդները բացատրում են քարտերի վրա գրված հասկացությունները, և խաղի ընթացքում արված դիտարկումները հնարավորություն են տալիս հետազոտել երիտասարդների ընկալումները և մոտեցումները առօրյալում հանդիպող բազմաթիվ երևույթների վերաբերյալ:

Իրականացվել են բանավեճեր երիտասարդական խմբերի միջև կրթության հիմնախնդիրների վերաբերյալ:

Մասնակիցները եղել են բուհերի տասնողնական կառույցների ներկայացուցիչներ, ուսանողներ:

«ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2013-2017թթ-ների ռազմավարության մոնիթորինգ և գնահատում» հետազոտության շրջանակներում ԵՈՒԻ-ում անց է կացվել Երիտասարդական քաղաքականության ռազմավարական պլանավորում թեմայով դասընթաց, որին մասնակցում էին քաղաքականության մշակնողներ, իրականացնողներ:



Կազմակերպվել են հանդիպումներ երիտասարդական հետազոտության թեմաների որոշման համար:

«Ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները» հետազոտության շրջանակներում ԵՈՒԻ-ն համագործակցել է այն կառույցների հետ, ովքեր հետաքրքրված են եղել ստեղծարարության գաղափարի տարածման համար հանդիպումների շարք իրականացնելու հարցում:



Հետազոտության արդյունքները քննարկելուց բացի, ստեղծարարության գաղափարի տարածման նպատակով ԵՈՒԻ-ն հետազոտության թիրախային ոլորտներում թեմատիկ քննարկումներ է կազմակերպել՝ համագործակցելով «Հողված 3» ակումբի և «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական ՀԿ-ի, Դի-Վի-Վի Ինթերնեյշնլի, ԲՈԱՏ Սմարթ կենտրոնի հետ:

Համագործակցության շրջանակներում տրամադրվել է տարածք բանախոսների, երիտասարդների, ստեղծարար ոլորտների ներկայացուցիչների հետ քննարկումների իրականացման համար:

Իրականացվել է հանդիպումներ հետևյալ թեմաներով՝

- ❖ Ստեղծարարություն և երիտասարդներ. Գրականություն
- ❖ Ստեղծարարություն և երիտասարդներ. Գովազդ, մարկեթինգ և PR

- ❖ Ստեղծարարություն և երիտասարդներ. Հրատարակչություն
- ❖ Ստեղծարարություն և երիտասարդներ. Թանգարաններ
- ❖ Ստեղծարարություն և երիտասարդներ. հանրային քննարկում Գյումրիում:

Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոնը 2013-ից հավատարմագրվել և միացել է Եվրոպական կամավորական ծառայության (EVS) մեծ ընտանիքին: EVS-ը 18-30 տարեկան երիտասարդներին թույլատրում է անվճար նեգրավվել կամավորական աշխատանքներում եվրոպական բոլոր երկրներում: Ծրագիրը հոգում է կամավորի ճանապարհածախսը, կեցության, առողջական ապահովագրության և սննդի բոլոր հարցերը, ինչպես նաև ամսական գրպանի գումար է հատկացնում: Ծրագիրը նպաստում է համերաշխության, փոխըմբռնման և հանդուրժողականության զարգացմանը երիտասարդների միջև՝ նպատելով հասարակական համախմբվածության ամրապնդմանը և երիտասարդների ակտիվ քաղաքացիությանը Եվրամիությունում: Աշխատելով համայնքի համար՝ լեզվի դասընթացի հնարավորություն, աշխատանքի մասով ոչ ֆորմալ կրթություն ու պրակտիկա ձեռք բերելու լավագույն տարբերակն է: Կամավորական աշխատանքի ավարտին փորձի ուսուցումն ու աշխատանքի հավաստիացումը պաշտոնապես ճանաչվում է Youthpass-ի միջոցով: EVS ծրագիրը պահանջում է համագործակցություն 3 առանցքային դերակատարների միջև՝ ուղարկող կազմակերպություն, հյուրնկալող կազմակերպություն և կամավոր: Մեր պարագայում Հայաստանից ուղարկող կազմակերպության դերն ունենք նաև մենք, և սպասում ենք ակտիվ կամավորների: 2016թ. իրենց կամավորական ծրագրերն են շարունակել 2 կամավոր Լեհաստանից և Գերմանիայից, 2 կամավոր ուղարկել ենք Լեհաստան:

Ինստիտուտը կարևորում է կամավորության ինստիտուտի զարգացումը Հայաստանում, ինչին ուղղված պարբերաբար մեր գործունեության տարբեր փուլերում ներգրավվում ենք կամավորներ Հայաստանից: 2017թին Ինստիտուտը համագործակցել է Վալերի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի Կարիերայի կենտրոնի հետ: Համագործակցության շրջանակներում 3-4 կուրսի 18 ուսանողներ իրենց ուսումնական պրակտիկան կազմակերպել և իրականացրել են ԵՈՒԻ-ում, իսկ նրանցից երեքի հետ հետագայում համագործակցել ենք մեր հետազոտական աշխատանքների շրջանակում:

ԵՈՒԻ-ն Կրթական քաղաքացիական նախաձեռնության անդամ է: Այս [համագործակցության](#) շրջանակներում մշակվել է կրթական բարեփոխումների վերաբերվող [համառոտագրեր](#):

ԵՈՒԻ կատարած բոլոր աշխատանքները լուսաբանվել են Ինստիտուտի՝ www.ystudies.am կայքէջում և [ֆեյսբուքյան էջում](#):

ԵՈՒԻ-ն համագործակցել է www.erit.am պորտալի հետ երիտասարդներին վերաբերող հետազոտական տվյալների շարք ստեղծելու համար: Համագործակցության նպատակն էր մեդիայի միջոցով երիտասարդներին հուզող խնդիրների վերաբերյալ հետազոտական տվյալների տարածումը:

ԵՈՒԻ-ն հյուրընկալվել է Առաջին ալիքի տաղավար, որտեղ ներյակացվել է «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտությունը. Ինստիտուտի ներկայիս վիճակը և կայացման հեռանկարները»:

ԵՈՒԻ Գործունեության արդյունքներ

2016-2018թթ. Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի գործունեության արդյունքներն են՝

Հետազոտություններ՝

- «Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները»,
- «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի մասին» հետազոտություն,
- «Անցյալի, ներկայի և ապագայի պատկերը երիտասարդության գիտակցության մեջ» միջազգային հետազոտություն
- «Ներառումը Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանում» հետազոտություն,
- «ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2013-2017թթ-ների ռազմավարության մոնիթորինգ և գնահատում»
- «Ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները» հետազոտություն:

Հոդվածներ, Փաստաթղթեր՝

- ✓ [Ինչպե՞ս մշակել երիտասարդներին հարմարեցված քաղաքականություն և քաղաքականության համառոտագիրը](#)
- ✓ [Երիտասարդներին հարմարեցված հանրային քաղաքականությունների մշակում](#)
- ✓ [Երիտասարդների առաջնային կարիքները](#)
- ✓ [Ինչպե՞ս զարգացնել երիտասարդական աշխատանքի ինստիտուտը Հայաստանում. քաղաքականության համառոտագիր](#)
- ✓ [Աշխատաշուկայի ուսումնասիրության մեթոդաբանություն. քաղաքականության համառոտագիր](#)
- ✓ [«Երիտասարդական քաղաքականության որակի չափանիշներ». ուղեցույց](#)
- ✓ [Վերլուծություններ երիտասարդների զբաղվածության վերաբերյալ](#)
- ✓ [Ինչպե՞ս \(2\) ընտրել մասնագիտություն](#)
- ✓ [Երիտասարդների զբաղվածությանն ուղղված պետական ռազմավարությունը որպես միջգերատեսչական համագործակցության օրինակ:](#)

Երիտասարդների ներգրավում ինստիտուտի գործունեության մեջ

Կամավորական աշխատանքի խրախուսում, տարածում

Գործընկերների ցանցի ընդլայնում